



## Զահրատ

### Գագիկ ՃԺԲ .

Պաշտօնական ու տօնական  
Ցնցոտիներով զգեստաւորեալ  
Գագիկ ՃԺԲ .  
Բարեխնամ Արքայն  
Հայոց Աշխարհի  
Իր հաւատարիմ  
Շանը հետ  
Շան գ'Էլիզէէն կ'անցնի  
Թեպէտ լոռ է Գագիկ Արքայից Արքան  
Կը տանի անձայն  
Ծանր լուծը կեանքին  
Շունը սակայն  
Որ քանի օր է անօթի է այնքան  
Կը կաղկանձէ  
Տրտնաձայն  
Եւ ախորժակով անսահման  
Կը լափէ շուքը Գագիկ ՃԺԲ .  
Բազումողորմ  
Որ կորուսած առ յաւէտ  
Շուքն իր տօնական  
Ու պաշտօնական  
Գլուխը վեր բռնած  
Շան գ'Էլիզէէն

Կ'անցնի հպարտորէն

Անձանօթ

Անշուք